

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ  
ԺԱՍՆԸ 09:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան**  
**Մասնակցում էին`**

***Խորհրդի անդամներ`***

S. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Հովսեփյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

***Հրավիրվածներ`***

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Մուսայան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական

հիմնարկի տնօրեն

- Հ. Պետրոսյան «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պայմանագրերի կառավարման բաժնի պետ
- Վ. Ասլանյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ

1. Պայմանագիր T-1 T2-CW-01: Աշտարակ-Թալին M1 ավտոճանապարհի կմ 29+600-ից մինչև կմ 71+500 (Հատված 1), Երևան-Արարատ M2 ճանապարհի կմ 9+312 –ից մինչև կմ 47+400 (Հատված 2) և Երևան-Աշտարակ M1 ճանապարհի կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3) վերակառուցման և բարելավման շինարարական աշխատանքների իրականացման կապալառու Կորսան Կորվիամ կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրի քննարկում և հաստատում

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել Աշտարակ-Թալին M1 ավտոճանապարհի կմ 29+600-ից մինչև կմ 71+500 (Հատված 1), Երևան-Արարատ M2 ճանապարհի կմ 9+312 –ից մինչև կմ 47+400 (Հատված 2) և Երևան-Աշտարակ M1 ճանապարհի կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3) վերակառուցման և բարելավման կապալառուի բանակցված պայմանագիրը.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝

ա. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում անցկացված «T1-T2-CW-01 գոյություն ունեցող Աշտարակ-Թալին M1 ավտոճանապարհի կմ 29+600-ից մինչև կմ 71+500 (Հատված 1), Երևան-Արարատ M2 ճանապարհի կմ 9+312 –ից մինչև կմ 47+400 (Հատված 2) և Երևան-Արարատ M2 ճանապարհի կմ 9+312 –ից մինչև կմ 47+400 (Հատված 2) և Երևան-Աշտարակ M1 ճանապարհի կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3) վերակառուցման և բարելավում» միջազգային մրցույթի արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը,

բ. «Corsan Corviam Construcccion S.A.» կազմակերպության հետ կնքել պայմանագիր:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Ծրագրի կառավարման խորհրդատուի հետ կնքվելիք պայմանագրի վերաբերյալ

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

- 1) հաստատել ծրագրի կառավարման խորհրդատուի բանակցված պայմանագիրը.
- 2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝

ա. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում անցկացված ծրագրի կառավարման խորհրդատուի միջազգային բաց մրցույթի արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը,

բ. «Սաֆեժ» (Ֆրանսիա) և «Էպոխաս» (Իսպանիա) համատեղ ձեռնարկության հետ կնքել պայմանագիր:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի վերաբերյալ եռաչափ մոդելավորմամբ տեսահոլովակի պատրաստման հաստատում

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

1) «Եռաչափ մոդելավորման ուսումնական կենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր՝ 60 վայրկյան տևողությամբ, եռաչափ մոդելավորմամբ տեսահոլովակը նկարահանելու համար.

2) համաձայն ԱԶԲ-ի ընթացակարգերի՝ 7-10 րոպե տևողությամբ, եռաչափ մոդելավորմամբ տեսահոլովակը պատրաստելու նպատակով կազմակերպել և անցկացնել կազմակերպության ընտրության մրցույթ:

4. Այլ հարցեր

-----  
(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի հիշեցումն այն մասին, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում կառուցվող բոլոր կամուրջների, բետոնե ծածկերի

կառուցումը պետք է համապատասխանեն ամերիկյան AASHTO ստանդարտների պահանջներին:

2. Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

1) խստագույնս հետևել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում կառուցվող բոլոր կառուցվող բոլոր կամուրջների, բետոնե ծածկերի կառուցման աշխատանքներին, որպեսզի վերջիններս համապատասխանեն ամերիկյան AASHTO ստանդարտների պահանջներին.

2) ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությանը համապատասխան՝ առաջարկել ենթակապալառուներին, որպեսզի նախքան պայմանագրերի կնքումը, վերջիններս կառավարման նիստում ներկայացնեն իրենց ծրագրերը:

3. Ընդունել ի գիտություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի հաղորդումն այն մասին, որ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածում հանրային գերակա շահ ճանաչված հողատարածքների հետ կապված հարցերը քննարկվում են ԱԶԲ-ի հետ և առաջիկա 3 օրվա ընթացքում ՀՀ կառավարության աշխատակազմ կներկայացվի համապատասխան առաջարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ